ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 2-Ի N 143-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2015 թվականի հունիսի 2-ի *«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի գյուղատնտեսական նշանակության հողերի հողատեսքերի փոփոխման մարզային հանձնաժողով ստեղծելու և Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2009 թվականի նոյեմբերի 4-ի N 290 որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին»* N 143-Ա որոշման 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Ստեղծել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի գյուղատնտեսական նշանակության հողերի հողատեսքերի փոփոխման մարզային հանձնաժողով հետևյալ կազմով՝

1) ***Ռոմանոս Պետրոսյան*** - հանձնաժողովի նախագահ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետ,

2) ***Գուրգեն Ավետիսյան*** - հանձնաժողովի քարտուղար, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժնի-մարզային հողային պետական տեսչության պետ,

3) ***Միհր Եղիազարյան*** - հանձնաժողովի անդամ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ,

4) ***Պավել Ցուգունյան*** - հանձնաժողովի անդամ, «Կոտայք ջրօգտագործողների ընկերության» վերահսկողության բաժնի պետ *(համաձայնությամբ)*,

5) ***Լիլիթ Ավետիսյան*** - հանձնաժողովի անդամ, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության գյուղատնտեսական խորհրդատվության, նորարարությունների և մոնիթորինգի վարչության Կոտայքի բաժնի պետի պաշտոնակատար *(համաձայնությամբ)*,

6) ***Սրեփան Մարգարյան*** - հանձնաժողովի անդամ, Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության անտառային կոմիտեի «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպության «Հրազդանի անտառտնտեսություն» մասնաճյուղի ավագ անտառապետ *(համաձայնությամբ)*,

7) համապատասխան համայնքի ղեկավարը - հանձնաժողովի անդամ, *(համաձայնությամբ)*,

8) համապատասխան համայնքի գյուղատնտեսության գծով մասնագետ - հանձնաժողովի անդամ, *(համաձայնությամբ)*:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թվականի սեպտեմբերի 12
ք. Հրազդան
N 191-Ա